

«COVID 19 – ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԷԿՈՆՈՑԻԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐ
ՀՀ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ԽՈՑԵԼԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ COVID 19 –Ի
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԷկոԼուր» տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից իրականացվում է «COVID-19՝ նոր մարտահրավերներ էկոլոգիապես խոցելի համայնքներում» ծրագիրը, որի նպատակն է նպաստել էկոլոգիապես խոցելի համայնքների բնակչության սոցիալ-բնապահպանական իրավունքի պաշտպանությանը COVID-19 համավարակի պայմաններում:

Ծրագրի շրջանակներում Շնող և Թեղուտ բնակավայրերի բնակիչների համար պատրաստվել են տեղեկատվական փաթեթներ, որտեղ ներառված են բնակիչների համար COVID-19 համավարակով պայմանավորված իրազեկման թերթիկներ, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի մեղմացմանն ուղղված ՀՀ կառավարության սահմանած միջոցառումների սեղմագրերը:

Համայնքի ղեկավարի, բնակչության և մարզային ակտիվ քաղաքացիական հասարակական կազմակերպությունների համար կազմվել են Ծրագրի խնդիրներին առնչվող հարցաշար, որի պատասխանների, անցկացրած հարցազրույցների վերլուծությունն էլ հիմք է հանդիսացել սույն հաշվետվության համար:

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Շնող խոշորացված համայնքն իր մեջ ընդգրկում է Շնող, Թեղուտ և Քարկոփ բնակավայրերը: Համայնքի տարածքով են հոսում Դեբեդ գետն իր Շնող վտակով, ինչպես նաև Շնողի ձախափնյա վտակները՝ Դուքանաձորը, Պակասաջուրը (Խառատաձոր), Կռունկը, Փիջուտը, Շևուտը, Գուլյաբին¹: Թեղուտի պղնձամոլիբդենային բաց հանքը գտնվում են Դուքանաձոր գետի կիրճում, իսկ Թեղուտի լեռնահարստացման համալիրի պոչամբարը՝ Խառատաձոր գետի կիրճում: Դեբեդ, Շնող, Դուքանաձոր, Խառատաձոր գետերը և Փիջուտ վտակը գտնվում են Թեղուտի հանքարդյունաբերական ծրագրի ազագոյեցության ներքո:

Շնող բնակավայրի բնակչության թիվը կազմում է 3036 մարդ, որից կին՝ 1485, տղամարդ՝ 1551, թոշակառու՝ 495, նպաստառու՝ 35: Ունի դպրոց 311 աշակերտով, մանկական արվեստի դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզը լուծարվել է, փոխարենը ստեղծվելու է «Հեքիաթ» մանկապարտեզը, որն իր մասնաճյուղերն է ունենալու Շնող խոշորացված համայնքի 3 գյուղերում: «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը սպասարկում է Շնող խոշորացված համայնքի 3 բնակավայրերի բնակիչներին:

Շնողցիները զբաղվում են գյուղատնտեսությամբ: Բնակիչների փոքր մասն էլ զբաղված է «Թեղուտ» ՓԲԸ-ի աշխատանքներում: Հողի սեփականաշնորհումից հետո այգեգործությունը փոխարինվել է հացահատիկի, կարտոֆիլի և առաջին անհրաժեշտության այլ կուլտուրաների

¹ «Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ընդլայնում՝ մինչև 15 մլն. տ/տարի» ծրագրի բնապահպանական մաս, 2017թ.

մշակությամբ: Վերջին տարիներին այգեգործությունը նորից համայնքում զարգացում է ապրում. հիմնվում են նոր այգիներ:

Համայնքում առկա է ինքնահոս ոռոգման ցանց:

Թեղուտ բնակավայրի բնակչության թիվը կազմում է 796 մարդ, որից կին՝ 399, տղամարդ՝ 397, թոշակառու՝ 89, նպաստառու՝ 3: Ունի դպրոց 100 աշակերտով: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, պտղաբուծությամբ և բանջարաբուծությամբ, մեղվապահությամբ: Բնակչության մի մասը նախկինում աշխատում էր Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում և հարստացուցիչ ֆաբրիկայում:

Քարկոբ բնակավայրի բնակչության թիվը կազմում է 427 մարդ, որից կին՝ 226, տղամարդ՝ 201, թոշակառու՝ 60, նպաստառու՝ 7: Ունի դպրոց 60 աշակերտով: Բնակավայրը հիմնադրվել է կից գտնվող բազալտի և գրանիտի վերամշակմամբ զբաղվող գործարանի բազայի վրա:

Շնող համայնքի սոցիալական խնդիրներն են՝

- Թեղուտ և Քարկոբի վարչական տարածքների և Շնող բնակավայրի 2 թաղամասերի գազաֆիկացման խնդիրը, որն այս պահին լուծվում է:
- Ջրամատակարարման խնդիր: Ոռոգման ջրի պակասի հետևանքով համայնքի «Դուզ» հանդամասի 170 հա ավելի տարածք անջրդի է մնացել
- Գյուղատնտեսությամբ զբաղվելու համար մշակովի հողատարածքների և արոտավայրերի պակասը:
- Աշխատատեղերի պակասը:
- Միջհամայնքային տրանսպորտային միջոցների պակաս:
- Խոշորացված համայնքի բնակավայրերի անհամաչափ զարգացման միտումներ:

Շնող խոշորացված համայնքի ընդհանուր 195,54 հա գյուղատնտեսական հողերի գործառնական նշանակությունը փոխվել է ընդերքօգտագործման հողերի կատեգորիայի, ինչի արդյունքում գյուղացիները գործնականում զրկվել են ամբողջ ծավալով գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունից:

Աշխատատեղերի բացակայությունը 2018 թվականից ստեղծել է լարված սոցիալական վիճակ: Աշխատանքների անժամկետ դադարեցման հիմքով «Թեղուտ» ՓԲԸ-ն լուծել էր 1032 աշխատակիցների հետ կնքած աշխատանքային պայմանագրերը, այն նույն աշխատակիցների, որոնց մի մասից վերցրել էր իրենց սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերը և նրանց թողել առանց ապրուստի այլընտրանքային միջոցների: 2019թ. հանքավայրի և գործարանի վերաբացման ժամանակ բնակիչները հանդիպել են Ընկերության նոր ղեկավարության հետ և խնդրել՝ աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալ համայնքի բնակիչներին, որովհետև Ընկերությունը վերցրել է իրենց հողերը, եկամտի միակ աղբյուրը մնացել է «Թեղուտ» ՓԲԸ-ում աշխատելու տարբերակը: Քանի որ Ընկերությունը մինչև 2020 թվականի օգոստոս ամիսը չէր կատարել իր խոստումը, օգոստոսի 21-ին թեղուտցիները մի քանի ժամով փակել են «Թեղուտ» ՓԲԸ տանող ճանապարհը՝ պահանջելով հանդիպում Ընկերության ղեկավարության հետ: Սեպտեմբերի 2-ին հանդիպումը կայացել է, որի ժամանակ էլ Ընկերությունից խոստացել են, որ մինչև

դեկտեմբեր աշխատանքի կրնդունեն 20 հոգու, որից 10-ին՝ մինչև սեպտեմբերի վերջ: Ընկերության ներկայացուցիչը խոսք է տվել ընդհանուր առմամբ 20-60 հոգու աշխատանքի ընդունել: Բնակիչների առաջնահերթության ցուցակը կազմելու են իրենք՝ ըստ կարիքավորության աստիճանի:

Թեղուտի պղնձամուխիդենային հանքը շահագործող Ընկերության հետ առկա է կոնֆլիկտ համայնքի 106 հողագրկված ընտանիքների, ինչպես նաև Ընկերությունում կայուն աշխատատեղեր ունենալու երաշխիքը կորցրած բնակիչների միջև:

ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքում² համայնքի 2017-2021 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը միասնական չէ, և այն համայնքի կազմի մեջ մտնող 3 բնակավայրերի համար առանձին-առանձին է ներկայացված՝ մինչ խոշորացված համայնքի ձևավորումը: «Թեղուտ» ՓԲԸ-ի սոցիալական օժանդակության գործունը հաշվի է առնված Շնող համայնքում նախատեսվող բազմաթիվ ծրագրերից 1-ում՝ մանկապարտեզի շենքի հիմնանորոգման ծրագրում: Իսկ նախկին Թեղուտ և Քարկոփ համայնքների զարգացման ծրագրերում «Թեղուտ» ՓԲԸ-ից օժանդակություն ստանալու ակնկալիքներ չկան:

Բնակչության առողջության բավարար կազմակերպման համար համայնքային բժշկական ամբուլատորիայում բացակայում է ժամանակակից հետազոտական և բուժական գործիքակազմի, դեղամիջոցների և բարձր որակավորմամբ բժշկական անձնակազմի առկայությունը:

ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքի վրա էական ազդեցություն է գործում ՀՀ Լոռու մարզի Թեղուտի պղնձամուխիդենային հանքավայրը շահագործող «Թեղուտ» ՓԲԸ-ն: Ըստ ընդերքօգտագործման թույլտվության՝ միայն հատկացված հանքի տարածքը 103,0 հա է, հանքավայրը շահագործվում է 2013 թվականից բաց եղանակով, տարեկան 7000,0 հազ.տ հանքաքարի արդյունահանման թույլտվությամբ: Պետական սեփականություն հանդիսացող 374 հա անտառային տարածքներ և համայնքային 81,483 հա գյուղատնտեսական նշանակության հողեր տրամադրվել է «Թեղուտ» ՓԲԸ-ին:

Թեղուտի ծրագրի համաձայն՝ պետք է հատվի 357 հա անտառ, փոխարենը տնկվի 714 հա անտառ՝ համաձայն ՀՀ կառավարության 2007-ի օգոստոսի 30-ին ընդունված «Պետական անտառային հողերում անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման հետ չկապված աշխատանքների իրականացման կարգը սահմանելու մասին» N 1045-Ն որոշման³: Այս որոշման 8.1 կետով օգտագործման տրամադրվող անտառային տարածքի դիմաց տնտեսվարողը պետք է առնվազն կրկնապատիկ անտառապատման աշխատանքներ իրականացնի: Սակայն 2015թ-ի օգոստոսի 4-ին ՀՀ բնապահպանության նախարար Արամայիս Գրիգորյանը և ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը համատեղ հրաման են ստորագրել, որով թույլ են տվել «Թեղուտ» ՓԲԸ-ին 714 հեկտար ընդհանուր մակերեսով անտառապատման համար նախատեսված տարածքից 180 հա տարածքում՝ Շնող և Թեղուտ համայնքներում, պտղատու այգիներ հիմնել: Այգի հիմնելու հիմնական պատճառը եղել է Թեղուտում և Շնողում ազատ հողատարածքների

² <http://lori.mtad.am/reports5/>

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=87230>

բացակայությունը, և մարդիկ թույլ չեն տվել իրենց սակավ արոտավայրերում անտառապատում իրականացնել: Փոխհամաձայնություն է ձեռք բերվել անտառի փոխարեն որոշ սեփականատերերի հողատարածքներում այգիներ տնկել: Մա նախագծային շեղում է: Այգին անտառ չէ:

Բնապահպանական հիմնական խնդիրը Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման գործընթացում անտառային տարածքների հատումն է, հանքավայրի շահագործման ընթացքում հազարավոր տոննաներով կուտակված լցակույտերից փոշու և ծանր մետաղների արտանետումները մթնոլորտային օդ, ստորերկրյա և մակերևութային ջրերի աղտոտումը, լեռնահարստացուցիչ կոմբինատի 200մլն խմ ծավալով և 180 հա մակերես ունեցող «Թեղուտ» պոչամբարի տեխնիկական անվտանգության և կայունության ցուցանիշների անկումը և այնտեղից կատարվող արտահոսքերով մակերևութային և ստորերկրյա ջրերի աղտոտումը:

Հանքի շահագործման հետևանքով աղտոտվում են նշված գյուղերի հողերը, ջրերը և մթնոլորտային օդը, գյուղացիների արտադրած գյուղատնտեսական մթերքը դարձել է շուկայում անմրցունակ:

Թեղուտի հանքը գտնվում է անտառային տարածքում՝ հարուստ Կարմիր գրքում գրանցված կենդանիների և բույսերի տեսակներով: Ըստ «Վալլեքս» խմբի ընկերությունների պաշտոնական կայքի⁴ տվյալների՝ 2017թ-ի վերջի դրությամբ հատվել է 223,2 հա անտառ:

Ըստ Շնող համայնքի 2017-2021թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի՝ հատված անտառային տարածքին համարժեք անտառ հիմնելու փոխարեն «Դուգ» կոչվող հանդամասի 20,0 հա տարածքում Ընկերությունը տնկել է պտղատու ծառերի տնկիներ, նախատեսվում է նմանատիպ աշխատանքների իրականացում ևս 160,0 հա վրա, սակայն այդ տարածքն անջրդի է: 2016թ-ին, ըստ Շնողի ՏԻՄ-ի ներկայացուցչի ԷկոԼուրին տված հարցազրույցի, հիմնվել է 21 հեկտար այգի, 10 հեկտարի համար էլ նախագիծ է ներկայացվել է 2016-ի աշնանը հիմնելու համար: Այս Ծրագրի շրջանակներում ԷկոԼուրի թիմին Շնողի համայնքապետ Դավիթ Դումաշյանը հայտնեց, որ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից այս տարի ևս տնկվել է 31 հա այգի:

Ոչնչացել են կենդանիների ապրելավայրերը և բույսերի աճելավայրերը: Այդտեղ գտնվում են նաև հանքային ջրերի աղբյուրներ և պատմամշակութային հուշարձաններ, որոնք նույնպես վնասվել և ոչնչացել են:

2018 թվականին «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի, «ԷկոԼուր» ՀԿ-ի և Արևմտյան Եվրոպայում քիմիական անվտանգության կենտրոն հանդիսացող չեխական «Աոնիկա» կազմակերպության հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունն արձանագրել է շրջակա միջավայրի խիստ աղտոտում Թեղուտի հանքավայրի ենթակառուցվածքների ենթակա տարածքներում, ծանր մետաղներով աղտոտումներ են արձանագրվել գետերի հունային նստվածքներում, բուսական սննդատեսակներում, համայնքի բնակիչների մազերի մեջ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պղնձի պարունակությունը Թեղուտի պոչամբարի մերձակա տարածքում կազմել է 60 000մգ/կգ, որը 1000 անգամներով գերազանցում է այդ

⁴ <http://vallexgroup.am/environmentalmanagement/#14>

մետաղի սահմանային թույլատրելի խտությունները: Շրջակա միջավայրի աղտոտումը տեղի է ունենում բոլոր ճանապարհներով՝ օդի, հողի, ջրի, գյուղմթերքի միջոցով:

Հանքավայրի շահագործման ժամանակահատվածում Շնող գետի ջրերի որակը 2-րդ /խմելու ջուր/ կատեգորիայից դարձել է 5-րդ /բարձր աղտոտվածություն/ կատեգորիա, ինչը հաստատված է նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2019թ. Հայաստանի Հանրապետության տարածքում 2019 թվականին մակերևութային ջրերի որակի ամփոփագրում⁵: Ըստ տեղեկանքի՝ Շնող գետը, որոնցով ռոտում են իրականացնում Թեղուտ և Շնող գյուղերի բնակիչները, ունի մոլիբդենով և պղնձով աղտոտվածության բարձր աստիճան, իսկ Դեբեդ գետը՝ մոլիբդենով և կախյալ նյութերով: Աղտոտվածությունը հաստատված է նաև մի քանի այլ գիտական հետազոտություններով:

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՄԲ ԲԱՑԱՀԱՅՑՎԱԽ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի շրջանակներում անցկացված հարցազրույցին մասնակցել են 17 բնակիչ (5 տղամարդ և 12 կին) և համայնքապետը: Կատարված հարցազրույցների վերլուծությամբ պարզվեց հետևյալը՝

Սոցիալական վիճակ

1. Հարցմանը մասնակցած բնակիչները նշել են, որ համայնքի սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները պայմանավորված են աշխատատեղերի բացակայությամբ, ռոտուման ջրի սակավությամբ, կատարված աշխատանքի դիմաց ստացված ոչ համարժեք, ցածր աշխատավարձով, բնակչության ցածր գնողունակության հետևանքով տնային տնտեսությունից ստացված գյուղատնտեսական մթերքների, մասնավորապես, մեղրի իրացման դժվարություններով:
2. Ըստ հարցվածների մեծամասնության՝ COVID-19-ը էական ազդեցություն չի թողել իրենց ընտանիքի եկամուտների վրա, քանի որ մինչև համավարակն էլ գտնվել են ոչ լավ վիճակում, ուղղակի ավելացել են համավարակի տարածման կանխման համար անհատական պաշտպանիչ միջոցների ձեռքբերման և բուժզննություն անցնելու համար պահանջվող ծախսերը, կամ էլ ընտանիքի անդամները չեն մեկնել արտագնա աշխատանքի:
3. Գյուղատնտեսական աշխատանքների վրա COVID-19-ը թողել է նվազ ազդեցություն, քանի որ ֆերմերները բաց տարածքում են իրականացրել իրենց աշխատանքները, բացի դրանից, ի սկզբանե փոքր են դրանց ծավալները:
4. Ըստ համայնքապետի՝ 2020թ. համավարակի պատճառով արտերկիր արտագնա աշխատանքի չի մեկնել շուրջ 50 մարդ, ինչն էլ հանդիսացել է համայնքում գործազրկության աճին:
5. Սույն Ծրագրի և տեղի հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Օլեգ Դուլգարյանը նշեց. «COVID-ով պայմանավորված ժամանակաշրջանում սոցիալական իրավիճակն ավելի է վատացել, սրվել, քանի

⁵ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/ampopag/Water%20report%202019.pdf>

մարդիկ, որ արտագնա աշխատանքով էին զբաղված: Սոցիալական խնդիրն է բարձրացել և մի քանի անգամ այդ ժամանակահատվածում թեղուտցիները փակել են ճանապարհ, պահանջել, որ իրենց ընդունեն հանքարդյունաբերական ընկերությունում աշխատանքի: Եվ դա պայմանավորված է հենց նրանով, որ մարդիկ, որ չունեն դրսից կամ արտագնա աշխատանքով գումար վաստակելու հնարավորություն, չունեն նաև գյուղատնտեսությամբ իրենց առօրյան լուծելու հնարավորություն, քանզի Թեղուտի հողերը՝ բոլորը, վաճառվել են ժամանակին, և այդ մարդիկ չեն կարողանում զբաղվել գյուղատնտեսությամբ: Այսինքն, դա կարելի է սոցիալական սրացումների շարքին դասել: Եվ այստեղ Ընկերությունն ուղղակի պարտավոր է տվյալ մարդկանց, չասեմ, աշխատանքի ընդունել, որովհետև աշխատանքի ընդունելը բերում է սոցիալական այլ անարդարության, այսինքն, ստացվում է, որ մի խումբ մարդկանց աշխատանքի ընդունելու համար Ընկերությունը կամ պետք է իր հանքարդյունաբերական ծավալները մեծացնի, կամ էլ այդ մարդկանց ընդունելու համար մեկ ուրիշ մարդկանց աշխատանքից ազատի: Այսինքն, երկու դեպքում էլ ինքը սոցիալական խորքային խնդիրներ է ստեղծում: Ընկերությունը պարտավոր է թեղուտցիներին առաջարկի այլընտրանքային աշխատատեղեր: Բոլորը չեն կարող այդտեղ հանքարդյունաբերությամբ զբաղվել»:

6. Ըստ բնակիչների, վերջին տարիներին հանքավայրից և պոչամբարից արտանետվող փոշով շրջակա միջավայրի աղտոտվածության և ջրային ռեսուրսների հավասարակշռության խախտման հետևանքով համայնքային գյուղատնտեսական հողերում այլևս չեն աճում ավանդական մշակաբույսեր, մասնավորապես լոբի և հատիկավոր այլ կուլտուրաներ:

Բուժսպասարկման ոլորտ, բժշկական հաստատությունների վիճակը

1. Կորոնավիրուսային վարակվածության վերաբերյալ համայնքի բնակչության իրազեկվածության մակարդակը բավականին բարձր է՝ գիտեն ախտանշանների մասին, գիտեն իրենց գործողություններն այդ պարագայում: Ըստ հարցման մասնակիցների՝ իրենք հետևում են հակահամաճարակային կանոններին, կրում են շնչադիմակ, ախտահանում են ձեռքերը, օդափոխում են սենյակը, վարակվածության կասկածի դեպքում մեկուսանում են ընտանիքի անդամներից, զանգահարում են ընտանեկան բժշկին, կամ կանչում շտապօգնություն: Գիտեն, թե իրենց ինքնամեկուսացման օրերին ով պետք է իրենց օգնի (50%-ը՝ նշել է ազգականին, 50%-ը չգիտի):
2. Հարցվածների 66,7 %-ը պատասխանել է, որ առողջապահական խնդիրներ ունենալու դեպքում դիմում է համայնքային բուժկետ, իսկ մնացածը՝ Երևանի առողջապահական կենտրոններ: Համայնքում գործող բուժսպասարկման կետի՝ COVID-19-ի իրավիճակի պահանջներին համապատասխան բուժօգնության կազմակերպման աշխատանքներից գոհ են հարցվածների 80,0%-ը, իսկ 20,0%-ը դժգոհ են:

Պետական, ՏԻՄ և մասնավոր հաստատություններից ստացվող աջակցության նկարագիրը և վերահսկողությունը

1. Համայնքապետարանը COVID-19-ի կանխարգելման միջոցառումների համար պետության կողմից չի ստացել որևէ սուբսիդավորում:
2. ՀՀ կառավարության կողմից իրականացված COVID-19-ի մեղմման սոցիալական ծրագրերից օգտվելու ժամանակ ծագած խնդիրների վերաբերյալ հարցին ի պատասխան, հարցված բնակիչները նշեցին, որ չեն բախվել որևէ դժվարության:
3. Հարցվածների գերակշիռ մասը պատասխանել է, որ չի օգտվել ՀՀ կառավարության կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրերով սահմանվող օժանդակություններից, բացառությամբ բնական գազի մատակարարման և էլեկտրական էներգիայի մատակարարման դիմաց և 0-18 տարեկան երեխա ունեցող ընտանիքներին տրված միանվագ դրամական օժանդակություններից:
4. Շնողի համայնքապետը նշեց, որ համայնքային բյուջեից բնակիչների համար կանխարգելիչ միջոցների՝ դիմակների, ալկոզելի, ձեռնոցների ձեռքբերման համար ծախսվել է 300,0 հազար դրամ, 10,0 հազար դրամի սնունդ է տրամադրվել է մեկուսացածներին: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիրը GIZ-ի հետ համագործակցությամբ 498 հազար դրամ բյուջեով փոքր դրամաշնորհ է տրամադրել Շնող համայնքին «Կորոնավիրուսային հիվանդության դեմ կանխարգելման միջոցառումներ Լոռու մարզի Շնող համայնքում» ծրագրի իրականացման համար: Ծրագրի շրջանակներում համայնքի աշխատուժի ներդրմամբ արտադրելու են ալկոզել, կարվելու է 500-750 բազմանգամյա օգտագործման կտորե դիմակ, որոնք բաժանվելու են սոցիալապես անապահով ընտանիքներին, դպրոցներին սոցիալապես անապահով երեխաների համար, հիմնարկ ձեռնարկություններին:



Նկար 1. Շնող համայնքի սոցիալ-բնապահպանական խնդիրների շուրջ հանդիպում համայնքապետ Դավիթ Ղումաշյանի հետ

5. «Թեղուտ» ՓԲԸ-ն COVID-19-ի պայմաններում համայնքին ուղղակի աջակցություն չի ցուցաբերել, սակայն ըստ համայնքապետի, 2020թ. համայնքի զարգացման համար տրամադրել է 140,0 մլն. դրամ գումար:
6. Ըստ համայնքապետի՝ Շնող համայնքի տարածքների բնապահպանական խնդիրների լուծման, պոչամբարի կայունության ապահովման երաշխիքների, Ընկերության օգուտներից համայնքի սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ֆինանսական

աջակցության, ինչպես նաև նախկինում իրենց կրած վնասների փոխհատուցման համար «Թեղուտ» ՓԲԸ-ի և համայնքապետարանի միջև 2018թ. կնքված պայմանագիրը վերակնքվել է 2019 թվականին և Ընկերությունն իր ստանձնած պարտավորությունները կատարում է:

7. «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Օլեգ Դուրգարյանը նշեց, որ COVID-19-ի նկատմամբ վերաբերմունքը տարածաշրջանում միանշանակ չէ: «Հասարակության մեջ ընկալումները և վերաբերմունքը տարբեր են: Ովքեր լրջությունը պատկերացնում էին, պահպանում էին հակահամաճարակային կանոնները: Ովքեր լավ չեն պատկերացնում, կամ չեն հավատում դրա գոյությանը, իրենք չեն պահպանում հակահամաճարակային կանոնները: Այս համավարակի դեմ պայքարը, որ հիմնականում տեսել ենք, ուստիկանական համակարգի՝ քաղաքացիների նկատմամբ հսկողությունն է և դիմակ կրելու պահանջը, և տուգանքների կիրառումը, ինչը սակայն զանգվածային բնույթ չի կրել»:

Ուսուցման կազմակերպումը

COVID-19-ի պայմաններում ներդրված հեռավար ուսուցման հետ կապված հարցվածների 44,5 %-ը նշել է, որ իրենց երեխաները ստացել են լիարժեք կրթություն և դժվարություններ չեն կրել, 50,0 %-ը նշել է, որ ունեցել են դժվարություններ պայմանավորված համապատասխան տեխնիկայի բացակայությամբ, ինտերնետային կապի խափանմամբ, ապրած սթրեսների, աշակերտ-ուսուցիչ ուղղակի շփման խոչընդոտի չհաղթահարմամբ, ստացած կրթության ցածր որակով: 5,5%-ը դժվարացել է հարցին պատասխանել:

Շրջակա միջավայրը

1. Հարցվածների մի մասը նշել է, որ ծագել է շրջակա միջավայրի աղտոտման նոր և վտանգավոր դրսևորում, մասնավորապես՝ համայնքի տարածքի աղտոտում օգտագործված դիմակներով և ձեռնոցներով:



Նկար 2. Օգտագործված դիմակներով փողոց Թեղուտ բնակավայրում



Նկար 3. Օգտագործված դիմակների «հավաքատեղի» Թեղուտում

2. Հարցվածների 33,3 %-ը նշել է, որ համավարակի պայմաններում պատկան մարմինները պատշաճ ձևով արձագանքել և լուծում են սովել իրենց բարձրացրած սոցիալ-էկոլոգիական խնդիրներին, իսկ 44,4 %-ն էլ պատասխանել է, որ իրենց բարձրացրած հարցերը չեն ստացել արձագանք, մնացած 22,3%-ը պատասխանել է, որ նման հարցով չի դիմել:

3. Նվազել է համայնքային խնդիրների շուրջ տեղի ունեցող հանրային կարծիքի արտահայտման հնարավորությունը, քանի որ ստեղծված իրավիճակում ժողովրդի կարծիքն իմանալու համար հանրային լսում կազմակերպելը դարձել է սահմանափակ: Այդ է վկայում այն հանգամանքը, որ 2020թ-ի օգոստոսի 10-ին Շնողի համայնքապետարանում տեղի ունեցած «Թեղուտ» ՓԲԸ-ի «Արտադրական պինդ թափոնների տեղադրման տեղամասի ստեղծման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ» հանրային լսումների 1-ին փուլի մասնակիցների սակավաթվությունը:



Նկար 4 և 5. Հանրային լսումների լուսանկարները՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի ֆեյսբուքյան էջից⁶

Մինչդեռ համայնքապետը հավաստիացրեց, որ բնակիչների ընդհանուր կարծիքի մասին տեղյակ են: Սակայն ԷկոԼուրի հետ զրույցում հարցման մասնակից բնակիչները

⁶ <https://www.facebook.com/TeghoutMiningCJSC>

նշեցին, որ որևէ հանրային լսման անցկացման մասին COVID-19-ի ժամանակաշրջանում տեղյակ չեն:

3. «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեությունը և տարածաշրջանում մետաղական հանքարդյունահանմամբ և հանքանյութի մշակմամբ զբաղվող այլ կազմակերպությունների գործունեությունն, ըստ հարցվածների 66,5 %-ի, ազդում է իրենց գյուղատնտեսական աշխատանքներից ստացված եկամուտների վրա, քանի որ կրճատվել է ռոռզվող հողատարածքների մակերեսը, բարձր է հողատարածքների աղտոտվածությունը, ամռան սեզոնին ռոռզման ջրի պակասի և աղտոտվածության արդյունքում բերքը չորանում է, կրճատվել են արոտավայրերի մակերեսները և բարձրացել է դրանց աղտոտվածության մակարդակը հանքանյութի և լցակույտերի փոշով: Մնացած 33,5%-ը նշել է, որ իրենց եկամուտների վրա չի ազդում, քանի որ իրենց տնտեսական գործունեությունը գյուղատնտեսությունը չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

COVID 19 համավարակի պայմաններում Շնող/Թեղուտ համայնքում առաջացել են նոր մարտահրավերներ:

1. COVID-19-ով պայմանավորված առաջացել է նոր մարտահրավեր՝ արտագնա աշխատանքի չմեկնած միգրանտների պարապուրդը և նրանց սոցիալական վիճակի վատթարացումը նոր աշխատատեղերի բացակայության պատճառով:
2. Ընկել է կրթության որակը՝ պայմանավորված հեռավար կրթության ցածր արդյունավետությամբ:
3. Որոշումների կայացման գործընթացում, մասնավորապես, «Թեղուտ» ՓԲԸ-ի գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին բնակչության մասնակցության սահմանափակություն և տեղեկացվածության մակարդակի անկում:
4. Կրճատվել են սպասարկման ոլորտի բիզնես ծառայությունների աշխատանքերի ծավալները:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ

1. Վերականգնել «Թեղուտ» ՓԲԸ-ի Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի 20.02.2013 թվականի ՊՎ-376 ընդերքօգտագործման պայմանագիրը և ՀՀ օրենքով սահմանված կարգով այնտեղ ամրագրել ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պատասխանատվության դրույթներ՝ հաշվի առնելով Շնող համայնքի կարիքները:
2. Մասնագիտական գնահատական ներկայացնել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը «Թեղուտի» պոչամբարի անվտանգության վերաբերյալ: Հրապարակել պոչամբարի կայունության վերաբերյալ արդեն իսկ առկա գնահատականները: Շեղումներ արձանագրելու դեպքում անհապաղ դադարեցնել պոչամբարի շահագործումը և կատարել պոչամբարի անվտանգությանն ուղղված աշխատանքներ:

3. COVID-19 համավարակի պայմաններում համայնքային զարգացման ծրագրերում հաշվի առնել նոր մարտահրավեր՝ աշխատանքային միգրանտների խնդիրը և նախատեսել կարճաժամկետ և երկրաժամկետ լուծումներ:
4. Ապահովել բնակչության համընդհանուր թեստավորում, որի ընթացքում բնակչության անապահով խավերի նկատմամբ սահմանել արտոնություններ:
5. Աջակցել համայնքում այլընտրանքային, ոչ հանքարդյունաբերական արտադրությունների հիմնմանը, գտնել մեխանիզմներ այդ արտադրությունների ստեղծման աջակցության համար:
6. Հանձնարարել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը՝ հետևելու խոշորացված համայնքների մեջ ընդգրկված բնակավայրերի համաչափ զարգացման սկզբունքին:
7. Չդադարեցնել տրվող տեղեկատվությունը համավարակի վերաբերյալ, կարևորել բնակչության շրջանում սոցիալական ինքնագիտակցության բարձրացմանն ուղղված քարոզարշավի անհրաժեշտությունը՝ բարձրացնելով անձի սոցիալական պատասխանատվության ենթամշակույթը:
8. Խթանել համայնքների հնարավորությունները COVID-19 համավարակի դեմ միջոցառումների իրականացմանը: